ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
HUMAN RIGHTS HOUSE
YEREVAN

Հյուման Ռայթս Հաուս Երևանի Կիսամյա Համառոտ Զեկույց

2017 հուլիսի 20

ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

2017-ի հունվարից հուլիս ամիսներին դիտարկված ճնշումների և իրավախախտումների դեպքերը հիմք են արձանագրելու, որ Հայաստանում իրավապաշտպանների և իրավապաշտպան գործունեության պայմանները անբավարար են՝ քաղաքացիների և հանրային խմբերի շահերն ու իրավունքները լիարժեքորեն պաշտպանելու համար: Հիմնարար աննպաստ գործոն են իրավապաշտպանների, իրավունքների և հանրային շահերի պաշտպանների, բնապահպանների, փաստաբանների հանդեպ պետական ինստիտուցիոնալ խոչընդոտները, անհավասար վերաբերմունքը և բիզնես կառույցների առաջացրած արգելքները: Ակնառու է, որ իրավապաշտպանները և հանրային շահերի պաշտպան ակտիվիստները բախվում են ոչ միայն Հայաստանի անկատար դատաիրավական համակարգին, այլև պետության կառավարման հաստատությունների (անգամ Երևանի քաղաքապետարանի) առաջացրած խոչընդոտներին, պետականամերձ հաստատությունների, պետության կողմից խրախուսվող պահպանողական մշակույթի, ինչպես նաև վերջին տարիներին թափ առած հակահիրավապաշտպան ակտիվիստների և բիզնես ոլորտի ու կուսակցական շահերի ջատագով ՀԿ-ների առաջացրած արգելքներին: Հանրայնորեն տեսանելի գործիչները և իրավապաշտպանները (հատկապես կանանց և ԼԳԲՏ+ իրավապաշտպանները) դառնում են բարոյական պարսավանքների, ատելության և թշնամանքի թիրախ: Հատկանշական է, որ այսպիսի թիրախավորման արշավները, կառավարվում և ուղղորդվում են պետական մարմինների հովանավորչությամբ: Որպես հետևանք վերջին տարիներին Հայաստանում ծաղկում են ապրում կոնկրետ կուսակցական և պետական գործիչների հետ փոխառնչվող, ծպտյալ կերպով Հայաստանում ռուսամետ քաղաքականությանը և մեծ բիզնեսի շահերին աջակցող հասարակական կազմակերպություններ, որոնք ոչ միայն լուտանքներ, զրպարտություն, ատելության խոսք և սպառնալիքներ են տարածում իրավապաշտպանների հասցեին, այլև առաջ են մղում տվյալ քաղաքական հոսանքների շահերը՝ ի հաշիվ Հայաստանի քաղաքացիների շահերի և իրավունքների պաշտպանության:

ՀԻՄՆԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Խոչընդոտներ և իրավախախտումներ դատաիրավական համակարգի կողմից

- 2017-ին արձանագրվել են ՀՀ դատարաններում փաստաբանների հանդեպ ճնշումների դեպքեր, մասնավորապես քաղաքական հնչեղություն ունեցող

«Սասնա ծռեր» խմբի և Սեֆիլյանի և մյուսների գործերում: Հունիսի 13-ին Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կարգադրիչների խոսքերով իրենք փորձել են զսնել Ժիրայր Սեֆիլյանի, Ներսես Պողոսյանի և այլ անձանց փաստաբաններին: Մեղադրյալների պաշտպաններից Տիգրան Հայրապետյանը, Նինա Կարապետյանցը և Արայիկ Պապիկյանը նշել են, որ կարգադրիչներն իրականում իրենց ցանկացել են խուզարկել, ինչն անօրինական է և ինչից իրենք հրաժարվել են: Հարկ է նշել, որ ըստ փաստաբանների, դատարանի կարգադրիչները կողմնակալ վերաբերմունք են ցուցաբերում և «զննում» են միայն փաստաբաններին, իսկ դատավորին և դատախազներին՝ ոչ: Համանման վերաբերմունքի են արժանացել նաև հուլիսի 3-ին տեղի ունեցած «Սասնա ծռեր» խմբի գործով, 32 մեղադրյալներից 18-ի մասով ներգրավված որոշ փաստաբաններ: Դատական կարգադրիչները կամայական կերպով պաշտպանների մի մասի պայուսակներն առանց ստուգելու ներս էին թողել, իսկ մի քանիսին՝ Մուշեղ Շուշանյանին, Մոնիկա Մարգարյանին և Ինեսսա Պետրոսյանին, փորձել էին խուզարկել: Համաձայն վերոնշյալ փաստաբանների, դատարանը խուզարկման գործողություններով, ինչպես նաև անհիմն սանկցիաներով, խոչընդոտում է իրենց պաշտպանական գործողությունների իրականացմանը:

ՀՌՀ Երևանը դատարանի նախաձեռնած գործողությունները գնահատում է որպես կողմերի հավասարության սկզբունքի բացահայտ խախտում և գործող փաստաբանների վրա ճնշման փորձ:

Բացի այս, Հելսինկյան ասոցիացիայի նախագահի գնահատմամբ, իրենց փաստաբան Արայիկ Պապիկյանի ներգրավվածությունը վերոնշյալ՝ քաղաքական նշանակության («Սասնա ծռեր» խմբի; Սեֆիլյանի և մյուսների) գործերում առիթ է հանդիսացել դատական համակարգի կողմից նրա հանդեպ վրեժխնդրության՝ այլ գործերի մասով: Մասնավորապես, դեռևս 2016-ին 1-ին ատյանի դատարանի կողմից արդարացված՝ Արայիկ Պապիկյանի (և Հելսինկյան ասոցիացիայի) պաշտպանյալ Կարեն Կունգուրցևը 1 տարի անց Վերաքննիչ դատարանի կողմից 7 տարվա ազատազրկման է ենթարկվել: Այս հարցով Հելսինկյան ասոցիացիան պատրաստվում է դիմել Վճռաբեկ դատարան:

ՀՌՀ Երևանը կոչ է անում Վճռաբեկ դատարանին ընդունել բողոքը, անաչառորեն քննել գործը՝ բացառելով անարդար դատավարությունը և փաստաբան Արայիկ Պապիկյանի նկատմամբ հնարավոր վրեժխնդրությունը:

- 2017-ին սկսվել են «Վելես» իրավապաշտպան ՀԿ նախագահ Մարինա Պողոսյանի նկատմամբ բացված քրեական գործի դատական լսումները: Գործը նախ բացվել և կարճվել էր 2015-ին, ապա վերաբացվել 2016-ին՝ ուղեկցվելով բազմաթիվ օրինախախտումներով: 2017-ին գործը վարույթ է ընդունվել Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ չնայած դրա անօրինականության մասին Պողոսյանի փաստաբանի բողոքներին: ՀՌՀ Երևանը նախաձեռնել է գործի լսումների տեղական և միջազգային դիտորդություն (2017 հունվար-

մայիս), անօրինական է համարել Արաբկիրի դատարանի կողմից գործի քննությունը: Առաջին դատական նիստին՝ փաստաբանի միջնորդության արդյունքում և դիտորդների ներկայության պայմաններում է միայն հնարավոր դարձել վարող դատարանի փոփոխության մասին որոշումը: Արդեն Կենտրոն-Նորք Մարաշ դատարանի կողմից երկրորդ նիստը նշանակվել է առանց Պողոսյանին և նրա փաստաբանին նախապես պատշաճ ծանուցելու: Դեռևս 2016-ին քրեական գործի վերաբացման Վերաքննիչ դատական նիստի մասին Պողոսյանը պատշաճ ծանուցված չլինելու հետևանքով զրկված է եղել պաշտպանվելու իրավունքից. այս իրավունքի վերականգնման համար Պողոսյանի հայցը այժմ քննվում է Արաբկիրի դատարանում: Թեև ՀՌՀ Երևանը ավարտել է Պողոսյանի գործի դիտորդությունը, սակայն ֆեյսբուքյան էջերի հրապարակումներից տեղեկացել է, որ ըստ Պողոսյանի՝ իր դեմ հարուցված քրեական գործի և իր հայցի դատավարական գործընթացներում շարունակվում են անօրինականությունները և խախտվում է իր անմեղության կանխավարկածը:

ՀՌՀ Երևանը կոչ է անում գործերը վարող դատարաններին և դատախազությանը զերծ մնալ օրինախախտումներից և Մարինա Պողոսյանի գործով իրականացնել արդար դատաքննություն:

Խոչընդոտներ և իրավախախտումներ պետական կառավարման մարմինների և մերձպետական մարմինների կողմից

- 2017-ի հուլիսին 14-րդ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի կազմակերպիչները փառատոնի ցուցադրումից հանեցին նախապես հաստատված «Հայեր. հայացք ներսից և դրսից» ծրագիրը՝ կոմպրոմիսի գնալով հոմոֆոբ դիրքորոշում ցուցաբերած գործընկեր՝ Կինոգործիչների միության դահլիճ տրամադրելու պայմանին: Ըստ այդ պայմանի, միությունը պատրաստ էր ֆիլմերի ցուցադրման դահլիճ տրամադրել, եթե փառատոնը ծրագրից դուրս թողներ ԼԳԲՏ մարդկանց խնդիրներին անդրադարձող «Լսիր ինձ. չպատմված պատմություններ ատելությունից անդին» վավերագրական և «Ծիրանի այգիներ» գեղարվեստական ֆիլմերը: Արդյունքում ողջ ծրագիրը չեղարկելու կոմպրոմիսային քայլով «Ոսկե ծիրան» ՄԿՓ-ն լուրջ հարված հասցրեց «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» (Փինք Արմենիա) հասարակական կազմակերպության իրավապաշտպան գործունեությանը, որն էլ վավերագրական «Լսիր ինձ» ֆիլմի պատվիրատուն է և ձգտում էր կինոյի լեզվով Հայաստանի հանրությանը ներկայացնել ԼԳԲՏ մարդկանց խնդիրները և ապահովել նրանց հանրային տեսանելիությունն ու իրավունքների պաշտպանությունը: Կինոգործիչների միության կողմից մերժված ֆիլմերի ցուցադրությունն այլ սրահներում կազմակերպելու «Ոսկե ծիրանի» անկարողությունը ցույց է տալիս Հայաստանում պետական կառույցների հետ սերտ համագործակցող կառույցների անհետևողականությունը սեփական՝ հայտարարված արժեքային և քաղաքական ուղեգծին, այն է անխտրականությունը և տարբեր խմբերի առատ փորձի ներկայացումը: Փառատոնը վայելում է ՀՀ արտաքին գործերի նախարարության և ՀՀ մշակույթի նախարարության, ինչպես

նաև վերջին տարիներին պետական գործերին իր աճող միջամտությամբ հանդես եկող Հայ առաքելական եկեղեցու աջակցությունը: Եթե առաջին երկու հաստատությունները, չնայած իրավապաշտպանների կոչին, որևէ կերպ չարձագանքեցին միջադեպին, ապա առաքելական եկեղեցին հանդես եկավ բացահայտ հոմոֆոբ դիրքորոշմամբ՝ հայտարարելով, թե իրենք են հորդորել «Ոսկե ծիրանին» չցուցադրել ԼԳԲՏ մարդկանց մասին պատմող ֆիլմերը:

ՀՌՀ Երևանը կոչ է անում «Ոսկե ծիրանին»՝ հետևողական լինել և ապահովել միջազգային փառատոնին հարիր մարդասիրական և իրավահավասարության իր հայտարարված սկզբունքները, ինչպես նաև կոչ է անում Կինոգործիչների միությանը վերանայել իրենց հոմոֆոբ կեցվածքը: ՀՌՀ Երևանը նաև կոչ է անում ՀՀ արտգործնախարարությանը և ՀՀ մշակույթի նախարարությանը բացահայտորեն դատապարտել տեղի ունեցածը և աջակցել ՀՀ սահմանադրությանը և միջազգային իրավունքին համահունչ ԼԳԲՏ մարդկանց իրավունքների պաշտպանությունն իրականացնող ՀԿ-ներին՝ դրանով իսկ բացառելով մշակույթի ոլորտում խտրականությունը, ազատ արտահայտման իրավունքի և մշակութային բազմազանության արտահայտման սահմանափակումները և կանխելով Հայաստանում հոմոֆոբիայի հետագա տարածումը: ՀՌՀ Երևանը կոչ է անում նաև Հայ առաքելական եկեղեցուն վերանայել իր կողմից մարդկանց որոշ խմբերի նկատմամբ ատելության քարոզին ու տարածմանն աջակցող քաղաքականությունը, առերեսվել քրիստոնեական իրական արժեք հանդիսացող մարդասիրությանը և գնալ ռեֆորմների՝ ի պաշտպանություն խոցելի խմբերի:

Հետագայում վերոնշյալ միջադեպին իր տված հարցազրույցում անդրադարձավ նաև ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը՝ արտահայելով իրավաբանի գործունեությանը հակասող վերաբերմունք և հայաստանյան հասարակությունում ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների պաշտպանության շահը ստորադասող և մերժող դիրքորոշում:

ՀՌՀ Երևանը միանում է մի շարք ՀԿ-ների նախաձեռնությանը՝ կոչ անելով Զոհրաբյանին հաշվի առնել իր արտահայտությունների սոցիալական հետևանքները և վերանայել իր դիրքորոշումները՝ միաժամանակ հորդորելով ՀՀ Փաստաբանների պալատին՝ ի դեմս Խորհրդի, ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ քննելու պալատի նախագահի վարքագծի կանոնների խախտման դեպքը և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը:

- «Փինք Արմենիա»-յի իրավապաշտպան գործունեությունը դեռևս 2017 մայիսին բախվել էր անօրինական խոչընդոտման՝ այս անգամ Երևանի քաղաքապետարանի կողմից: Քաղաքապետարանի կամայականության արդյունքում մայիսի 27-ին ապամոնտաժվեցին «Փինք Արմենիա»-յի պատվերով Երևան քաղաքի կենտրոնական հատվածներում տեղա-

դրված սոցիալական գովազդի 3 վահանակները, որոնք պետք է ազդարարեին ԼԳԲՏ մարդկանց տեսանելիությունը և աջակցեին նրանց պաշտպանությանը: Վահանակները պետք է հանրային վայրում տեղադրված լինեին մայիսի 25-ից հունիսի 24-ը՝ համաձայն պատշաճորեն կնքված պայմանագրի: Այնինչ գովազդային պաստառները երեք օր անց հեռացվեցին տեղադրող կազմակերպության կողմից՝ անմիջականորեն Երևանի քաղաքապետարանի ցուցումով և սպառնալիքով: ՀՌՀ Երևանը արձանագրում է, որ այս միջադեպը Երևանի քաղաքապետարանի կողմնակալ, խտրական և անօրինական գործունեության ցայտուն ցուցանիշ է, որով խախտվում են ՀՀ սահմանադրության և մարդու իրավունքի պահանջները, դրսևորվում և խրախուսվում է հոմոֆոբ մթնոլորտը, խոչընդոտվում է ՀԿ-ի աշխատանքը՝ զրկելով նրանց իրավապաշտպան գործունեություն վարելու և խոսքի ու արտահայտման իրավունքից:

Երևանի քաղաքապետարանի առնչությունը ԼԳԲՏ մարդկանց իրավունքների պաշտպանության հարցերին դրսևորվել է նաև հուլիսի 3-ին, երբ «Իրավունքի կողմ» ՀԿ ներկայացուցիչների խոսքերով, կազմակերպության աշխատակիցների վրա հարձակում է տեղի ունեցել կազմակերպության գրասենյակի հարևանի կողմից, ով ըստ ՀԿ ներկայացուցիչների՝ ներկայացել է իբրև քաղաքապետարանի աշխատակից: Ըստ ՀԿ ներկայացուցիչների, հարևանը՝ Երևանի ավագանու ՀՀԿ խմբակցության և կուսակցության խորհրդի անդամ Նաիրա Նահապետյանը, սպառնացել է իրենց և հորդորել հնարավորինս շուտ փոխել գրասենյակի վայրը և հեռանալ, հակառակ դեպքում խոստացել է խնդիրներ ստեղծել ՀԿ-ի և իր շահառուների համար: ՀՌՀ Երևանի համար անորոշ է, թե որքանով է քաղաքապետարանն իբրև հաստատություն մասնակից տիկնոջ նախաձեռնությանը: Այդուհանդերձ, անհրաժեշտ ենք համարում քաղաքապետարանի հանրային միջամտությունը՝ «Իրավունքի կողմ» ՀԿ աշխատանքներին Նահապետյանի ձեռնարկած անօրինական խոչընդոտները չեզոքացնելու նպատակով:

ՀՌՀ Երևանը պահանջում է Երևանի քաղաքապետարանից դադարեցնել հոմոֆոբ պրակտիկաները, չեզոքացնել ԼԳԲՏ իրավապաշտպան կառույցների աշխատանքի խոչընդոտումը՝ դրա փոխարեն աջակցել իրավապաշտպանների գործունեությանը և քաղաքի բոլոր բնակիչների իրավահավասարությանը:

Անպատժելիությամբ հովանավորվող սպառնալիքներ և թիրախավորում, ատելության խոսքի դեպքեր

- 2017-ի հունիսի 2-ին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը ֆեյսբուքյան իր էջի հրապարակումներից մեկի ներքո, որտեղ իրավապաշտպանը քննադատել է Հայաստանի կառավարությանը Մարտի 1-ի սպանությունների, բազմաթիվ ապօրինությունների, անարդարությունների և համակարգի դեմ դուրս եկած քաղաքացիներին ճնշելու համար, ստացել է մահվան սպառնալիք Աշոտ Ավանեսյան անվամբ օգտատիրոջ կողմից: Մահվան սպառնալիքին հաջորդել է ևս մեկ սպառնալիք ֆեյսբուքյան ցանցի մեկ

այլ օգտատիրոջից: Հունիսի 5-ին Սաքունցը մահվան սպառնալիքի մասին հաղորդում է ներկայացրել գլխավոր դատախազություն, որն ուսումնասիրում է այն՝ պարզելու, թե արդյոք քրեական հետաքննություն սկսելու համար հիմքերն առկա են, թե ոչ: Միաժամանակ ոստիկանությունը հունիսի 8-ին Սաքունցին հրավիրել է ոստիկանություն: Համաձայն ոստիկանության, այն ուսումնասիրել է ՁԼՄ-ում տեղ գտած Սաքունցի հայտարարությունները և դրանք ուղարկել համապատասխան ստորաբաժանում՝ պարզելու արդյոք բավարար պատճառներ կան քրեական գործ հարուցելու համար: Առայժմ հայտնի չէ՝ որքանով են իրավապաշտպանի հանդեպ մահվան սպառնալիքի մասով իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված քայլերն արդյունավետ:

ՀՌՀ Երևանը պահանջում է իրավապահ մարմիններից իրականացնել անհապաղ և պատշաճ հետաքննություն, գտնել իրավապաշտպանի հասցեին մահվան սպառնալիք հնչեցրած անձին և միջոցներ ձեռք առնել հետագայում բացառելու ցանկացած իրավապաշտպանի թիրախավորումն ու որևէ տեսակի սպառնալիքի հնչեցումը:

- «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ համահիմնադիր Լարա Ահարոնյանն ու «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ հիմնադիր Մարո Մաթոսյանը վերջին տարիներին բազմիցս թիրախավորվել և ենթարկվել են ատելության խոսքի, անձի արժանապատվությունը և գործունեությունը նսեմացնող հայտարարությունների՝ պայմանավորված իրենց իրավապաշտպան գործունեությամբ: Ահարոնյանի և Մաթոսյանի դեմ հերթական թիրախավորող տեսահոլովակը տարածվել է 2017 հունիսի 30-ին՝ ֆեյսբուք սոցիալական ցանցում բացված հակահիրավապաշտպան և պրոռուսական քարոզչություն իրականացնող էջերից մեկի կողմից, որում պարբերաբար տարածվում են իրավապաշտպանների հանդեպ ատելության խոսք և կոչեր պարունակող գրառումներ, ֆոտոներ և տեսահոլովակներ: Ահարոնյանն ու Մաթոսյանը հատկապես հայտնի են Ընտանեկան բռնության դեմ օրենքի ջատագովության, ԼԳԲՏ մարդկանց հանդեպ խտրականության դեմ և հանուն կանանց իրավահավասարության իրենց ակտիվ պայքարով: Իր գործունեությամբ պայմանավորված թիրախավորման կապակցությամբ ԿՌԿ-ն դեռ 2012-ին քաղաքացիական հայցով դիմել է դատարան՝ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջով: Թեև կազմակերպության տվյալ հայցը բավարարվել էր, սակայն պետությունն առ այսօր գործնական քայլեր չի կատարում ՀՀ-ում իրավապաշտպանների սատարման և պաշտպանության, նրանց՝ խտրականությունից և բռնությունից զերծ մնալու իրավունքի լիարժեք և ինստիտուցիոնալ մեխանիզմներով իրացման ուղղությամբ: Վերջին տարիներին Հայաստանում կազմակերպված ռեակցիոն խմբերը շարունակում են թիրախավորել իրավապաշտպաններին՝ անպատիժ մնալու վստահությամբ՝ ըստ էության իրենց թիկունքում ունենալով իրավապահ մարմինների թաքուն աջակցությունը:

Սպառնալիքի կոչերը և հայհոյանքները պարբերական բնույթ են կրում նաև իրավապաշտպաններ Զարուհի Հովհաննիսյանի և Մամիկոն Հովսեփյանի (ինչպես և «Փինք Արմենիա»-յի այլ աշխատակիցների) հանդեպ, որոնք

ատելության խոսք պարունակող տարաբնույթ անձնական նամակներ են ստանում ֆեյսբուք սոցիալական ցանցով:

Թեև այսպիսի թիրախավորումները լրացուցիչ հիմնավորումն են Հայաստանում իրավապաշտպանների գործունեության խիստ անհրաժեշտության, և չեն արտամղում իրավապաշտպաններին իրենց հանձառած գործունեության ոլորտից, սակայն անպատիժ մնալով՝ կարող են, ի վերջո, հանգեցնել նրանց անձնական անվտանգության իրական ռիսկերի:

ՀՌՀ Երևանը պահանջում է իրավապահներից անպատժելի չթողնել վիրտուալ տարածքում իրավապաշտպանների հանդեպ սպառնալիքների և հայհոյանքների արշավների կազմակերպիչներին, ջանքեր գործադրել դրանց բացահայտման ուղղությամբ, ինչպես նաև կոչ է անում հանրայնորեն աջակցել իրավապաշտպան շարժմանը Հայաստանում՝ կանխելու թիրախավորման պրակտիկան:

- 2017 մայիսին հնչել են սպառնալիքներ փաստաբան Ինեսսա Պետրոսյանի և նրա ընտանիքի նկատմամբ՝ կապված վերջինիս մասնագիտական գործունեության հետ: Այս գործով ամբաստանյալի կարգավիճակում հայտնված խումբը (որոնցից մեկը արդարադատության գնդապետի որդի է) դատաքննության ընթացքում բազմիցս ագրեսիվ վարք է դրսևորել՝ հայհոյանքներ ու սպառնալիքներ ուղղելով Պետրոսյանի հասցեին: Պետրոսյանը, բացի դատարանում ստացած հայհոյանքներից, սպառնալիք պարունակող բովանդակությամբ նամակներ է ստացել նաև ֆեյսբուք սոցիալական ցանցով՝ Նարինե Արզումանյան կեղծանվամբ օգտատիրոջից: Մայիսին փաստաբանը դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ դատարանում իրեն ուղղված հայհոյանքների և սպառնալիքների վերաբերյալ նյութեր նախապատրաստելու և քրեական գործ հարուցելու առնչությամբ:

ՀՌՀ Երևանը կոչ է անում իրավապահ մարմիններին պատշաճորեն քննել Պետրոսյանի դիմումը և անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու փաստաբանի պաշտպանվածությունը:

- 2017-ի մարտին արձանագրվել է հանրային շահերի պաշտպանությամբ, մասնավորապես՝ դեմոկրատական և ազատ ընտրությունների, ընտրողների ազատ կամարտահայտման իրավունքի համար պայքարող «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանի ընտանիքի և անձնական կյանքի վերաբերյալ տվյալների հրապարակում և դրանով իսկ քաղաքական և բարոյական ճնշման փորձ: Անձնական տվյալները հրապարակվել են լրատվական կայքերից մեկի կողմից այն բանից հետո, երբ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն հանրայնացրեց իր հետաքննական ուսումնասիրությունը, որով փաստացիորեն բացահայտվում էր ԱԺ նախընտրական շրջանում Հայաստանը ղեկավարող ՀՀԿ կուսակցության կողմից վարչական ռեսուրսների համակարգային և լայնածավալ չարաշահումը՝ դպրոցների և մանկապարտեզի տնօրեններին, ինչպես նաև ՏԻՄ-երին ու մարզպետարաններին սեփական նախընտրական շտաբի աշխա-

տանքներում ներգրավումը և ընտրողների կամքին հակառակ նրանց անձնագրային տվյալների հավաքագրումը: Այսպիսի հանրային և քաղաքական նշանակության բացահայտումը առիթ հանդիսացավ, որ Դանիել Իոաննիսյանի անձնական կյանքի մասին միայն ՀՀ իրավապահ մարմիններին հայտնի տվյալներ հրապարակվեն՝ միտում ունենալով վարկաբեկել նրա անձն ու «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի նշանակալի աշխատանքը, ճնշում գործադրել վերջիններիս վրա: Այդ տվյալները իրենց բնույթով հրապարակման ենթակա չէին, քանի որ պաշտպանված են անձնական տվյալների պաշտպանության մասին օրենքով և Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի 8-րդ և 14-րդ հոդվածներով:

Հաշվի առնելով այն, որ Դանիել Իոաննիսյանի մասին անձնական տվյալները հասանելի էին միայն իրավապահ մարմիններին և կարող էին արտահոսել այդ համակարգում ներգրավված մարդկանց միջոցով՝ ՀՌՀ Երևանը պահանջում է իրավապահներից հայտնաբերել հրապարակման կազմակերպիչներին, դադարեցնել հանրային շահերի պաշտպանների նկատմամբ ճնշումները և քաղաքական հաշվեհարդարի նպատակով նրանց անձնական կյանքի պաշտպանվածության և անվտանգության ոտնձգությունը:

Խոչընդոտներ և իրավախախտումներ քաղաքացիական կազմակերպությունների անունից և միջոցով

- 2017-ին շարունակվել են 2016-ից նկատելի դարձած ճնշումները բնապահպան ակտիվիստների նկատմամբ՝ նրանց գործունեությունը քաղաքականությունների մշակման և որոշումների կայացման մակարդակում խոչընդոտելու նպատակով: Մասնավորապես հայտնի բնապահպան Արթուր Գրիգորյանը հայտնում է, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը (ԶՊՄԿ) և Սյունիքի մարզպետարանը խոչընդոտում են իր և իր գործընկեր բնապահպանների գործունեությունը հանքարդյունաբերությանը միջազգային չափանիշներ առաջադրող Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) համակարգող՝ Բազմաշահառու կողմերի խմբի (ԲՇԽ) շրջանակներում: Ըստ Գրիգորյանի, իր ձեռքի տակ եղած փաստերն ապացուցում են ԶՊՄԿ-ի և Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի անձնական և գործնական փոխկապակցվածությունը «Սիվիլ Վոյս» ՀԿ-ին և «Հանրային Դիվանագիտություն» բարեգործական ՀԿ-ին (որ նույնն է՝ Paradiplomacy), որոնց միջոցով էլ Գրիգորյանի խոսքերով կաթվածահար է արվում ԲՇԽ-ում բնապահպանների աշխատանքը: Նշված՝ բիզնես շահերի հետ փոխկապված ՀԿ-ները ձգտում են ԲՇԽ աշխատանքային խմբից դուրս մղել երկար տարիների բնապահպան ջանքերով հայտնի գործիչներին՝ վերջիններիս ԶՊՄԿ հետ գործարքային կապեր վերագրելով: Այնինչ, ըստ Գրիգորյանի, «Հանրային Դիվանագիտություն» ՀԿ-ն ինքը ղեկավարվում է Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի կնոջ՝ Էլզա Պետրոսյանի կողմից: Իսկ Վահե Հակոբյանը, նախքան մարզպետ նշանակվելը, ԶՊՄԿ-ի վարչական տնօրենն է եղել և իր՝ 2016-ի տարեվերջյան հանրային հաշվետվության համաձայն, նույն ընկերությանը կից բարեգործական

հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է: Բնապահպանի խոսքերով, պետական մարմին հանդիսացող մարզպետարանի վարչական ռեսուրսի ուղղակի կիրառմամբ և ՁՊՄԿ-ի (60% բաժնետերը գերմանական Քրոնիմետ ընկերությունն է) ֆինանսական միջոցների օգնությամբ ճնշում է գործադրվում քաղաքացիական հասարակության նկատմամբ: Արթուր Գրիգորյանի և Ինգա Զարաֆյանի (երկուսն էլ ԲՇԽ անդամ են) նկատմամբ հանրային մեղադրանքները տարածվել են դեռևս 2016-ին՝ անհայտ անձանց կողմից՝ ֆեյսբուքյան փակ խմբում անիմացիոն հոլովակ տարածելու միջոցով: Ոստիկանությունը 2016-ին հրաժարվել էր վարույթ հարուցել և բացահայտել հոլովակի հեղինակներին՝ համապատասխան մեխանիզմի բացակայության հիմնավորումով:

ՀՌՀ Երևանը գտնում է, որ իրավապահ մարմինները պարտավոր են բացահայտել ԲՇԽ աշխատանքների խոչընդոտման, հոլովակի ստեղծման և ՁՊՄԿ և Սյունիքի մարզպետարանի հետ փոխկապակցված ՀԿ-ների գործունեության միջև հնարավոր կապերը:

Զեկույցը պատրաստել են ՀՌՀ Երևանի անդամ Կանանց ռեսուրսային կենտրոնի և Սոցիոսկոպ ՀԿ-ի հետազոտողները և իրավապաշտպանները՝ հիմնվելով սեփական հարցումների, ՀՌՀ Երևանի փաստահավաք աշխատանքի, հակահիրավապաշտպան կայքերի և ֆեյսբուքյան էջերի մոնիթորինգի, ինչպես նաև epress.am և azatutyun.am լրատվակայքերի հոդվածների և hahr.am, hcav.am, pinkarmenia.org, sut.am կայքերի նյութերի վրա: Այս փաստաթուղթը չի ներառում հանրային շահերի պաշտպանների և իրավապաշտպանների նկատմամբ ճնշումների և գործունեության խոչընդոտների բոլոր այն դեպքերը, որոնցում վերջիններս հանրայնորեն արգելել են իրավապաշտպան կառույցներին հիշատակել իրենց անունը: Իրավապաշտպանների և հանրային շահերի պաշտպանների նկատմամբ ճնշումների մասին տվյալների հետագա համալրման համար բոլոր շահագրգիռ անձիք կարող են կապ հաստատել ՀՌՀ Երևանի հետ hrhyerevan@gmail.com հասցեով: